Եւ նոքա ասեն. Այոյ: Ապա ասէ. Զի՞նչ ա-
բար զայսչափ խաղինան: Եւ նոքա ասեն. Կայ
ամէնն: Եւ բարկացեալ արքայն՝ առաքէ զիւր
խորհրդակիցն եւ զնոսա, ասելով. Գնացէք
կոտորեցէք զդրունս, զկնիքն աւիրեցէք, բա-
ցէք եւ ի ներս մտէք, տեսէք զիմ խազնան:
Եւ իբրեւ չգտին եւ ոչինչ՝ ամօթալից դար-
ձան առ թագաւորն, նկուն եւ սեւերես. զի
իբր աւելով ջնջել էր եւ չուրջառ[11] մի չէր
թողել հին: Ասէ թագաւորն ցասմամբ. Ապա
զուք է՞ր խարէիք զիս, թէ ամէն խազնան է
տեղն է: Էառ զրանալին եւ հրամայեաց կրկին
կնքել իւր մօհրովն: Եւ գրեաց նամակ առ
Փափն, թէ Ես ինքնին եկեալ ի Լով՝ տեսի
աչօք եւ լուայ ականջօք զամենայն յօճրագոր-
ծութիւնս եւ չարագործութիւնս այդ Նիկոլ
եպիսկոպոսիդ. եւ թէ ո՛րպէս վատնեալ կո-
րոյս զայդչափ խազնան: Այլ եւ գրեաց զա-
մենայն իրս նորա մի ըստ միոջէ. եւ թէ Ես
կամէի զատել զնա, փախեաւ եւ եկն առ Քո
Սրբութիւնդ. արդ, Սուրբ Հայր, զատեսցես
զնա որպէս զյանցաւորս, զի ոչ եթէ եկն սա ի
մեր հաւատն վասն Աստուծոյ, այլ վասն ընչից եւ խազնին եկեղեցոյ: Եւ այլ բազում բանս գրեաց եւ ուղարկեաց: Եւ Հայոց պատուիրեաց, թէ Երբ գամ Շէվէտու պատերազմէն ի յաթոռս իմ ի Վարչով, գայք առ իս. Ես ձեր եկեղեցիքն կու տամ ձեզ:

Արդ զնալոյն ի վեր եպիսկոպոսին մինչեւ

---

[11] չուրջառ: